

33. ՀՄԼԱ՝ ՀԱՆԻՑ ԳԻԿԱՆ

Վարդապետն ուր մոնթի հետ դելնան գեղրան զվոնին՝ պտղի ու մատաղ ժողվին: Կէրթան գեղ մե, վարդապետ խոնախ իէղնի ուր սիրողին: Օլոր օր ճամպա օր գելնին, սիրող խուրջին մե լիք դաթա կը դնե հըտ վարդապետին: Մոնթ գուղե կտոր մե գաթա ուտե, էդ չապով կը մնա չետ, վարդապետ կը կուահե: Մոնթն օր գաթից կտոր մե կը դնե բերան, վարդապետ կը բոռա.

— Տի՛րացու, վերին գեղ վանքին քա՞նի մատաղ խոստ էկան: Տիրացուն ղգաթեն բերնեն կը հանե:

— Միտքսի չէ, հայր սուրբ, մոռցեր իմ:

Փշում լե կէրթան, մոնթ օր գաթից բրդուճ մե կը դնե բերան՝ վարդապետ կը բոռա.

— Տի՛րացու:

— Համե՛, հայր սուրբ:

— Ներքին գեղ քա՞նի կոտ ցորեն խոստ էկան:

— Զըմ գինա, մտահան իմ էրի, հայր սուրբ:

Տաս-քսան օր զվոնելուց չետք, վարդապետն ու մոնթ գիկան գիջնան սիրողի տուն: Գիշեր, օր կէղնի, վարդապետ գընկնա վըր շոքերուն, ափշալափի կէրթա սիրողի հետ: Տիրացուն կը բոռա.

— Հայր սուրբ, գինա՞ս, նո՛ր միտքսի չընգավ — վերին դեղ քսան մատաղ խոստ էկան:

Վարդապետ կը փախնի մտնա ուր տեղ, զօրղան կը քաշե վըր գլխուն: Քիչ չետե էլման կէրթա: Մոնթ կը բոռա.

— Հայր սուրբ, գինա՞ս, ներքին գեղ չիսուն կոտ ցորեն պտի տան...

Վարդապետ էլման կրփախնի, մտնա ջլտակ: Հարամ-դարամ կէղնի վրեն: Մոնթ կըսե մըջ ուր մտքին. «Հը՞, հմլա՛ պնչնեբուցգի կը բերիմ, շթողի՞ր գաթա ուտենք»:

